


## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

*Հոկտեմբերի 6-ին, կիրակի*

*Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:*

*Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:*

***

*Հոկտեմբերի 13-ին, կիրակի*

*Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, իր անդրանիկ ս. պատարագը մատուցեց Տ. Զարեհ արղ. Կարաղյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:*

*Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:*

***

*Հոկտեմբերի 20-ին, կիրակի*

*Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը ոգեշունչ քարոզ խոսեց:*

*Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:*

***

*Հոկտեմբերի 27-ին, կիրակի. - Գյուտ Խաչ*

*Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:*

*Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:*

***

*Նոյեմբերի 3-ին, կիրակի*

*Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տաթև արդ. Հակոբյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:*

*Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:*

*Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:*

***

Նոյեմբերի 17-ին, կիրակի.- Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Եգիպտոսի հայոց Ս. Աստվածածին Մայր եկեղեցու հովիվ Տ. Գալուստ քհն. Գալուստյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

Նոյեմբերի 24-ին, կիրակի

Այսօր Մայր տաճարում. Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը: Ս. պատարագի ընթացքում Մուշեղ, Հարություն և Արմեն սարկավագները, ձեռամբ պատարագիչ սրբազան հոր, ձեռնադրվեցին կուսակրոն քահանա: Երեք նորընծա աբեղաների անունները են. Մուշեղ սրկ.՝ հայր Մաշտոց. Հարություն սրկ.՝ հայր Բարսեղ, Արմեն սրկ.՝ հայր Ներսես:

Հավարտ ձեռնադրության պատարագիչ սրբազանն իր հայրական պատգամն ուղղեց նորընծա աբեղաներին:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

Նոյեմբերի 30-ին, կիրակի. - Տոն Սրբոց Առաքելոցն և առաջին լուսավորչացն մերոց Թադէոսի և Բարդուղիմէոսի

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա. ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նաթան ծ. վրդ. Հովհաննիսյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի Վեհարանի դահլիճում Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի ունեցավ Կիրակնօրյա ուսուցիչների հավաք: